

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՍՏԱՆՍԱՐԱՆ

ԾՐԱԳԻՐ

«ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՍԵԹՈՂԻԿԱ» (ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ)
ԱՌԱՐԿԱՅԻ (ԺԳ.00.02)

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ՍԵԹՈՂԻԿՈՐՀՐԴԻ 01.03.2012թ. N 4 ՆԻՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

2012թ.

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» առարկայի սույն ծրագիրը նախատեսված է «Ուսուցման և դաստիարակության մեթոդիկա» (օտար լեզուներ) ժԳ.00.02՝ գիտության բնագավառում մասնագիտացող *ասպիրանտների/հայցորդների համար*: Ծրագիրն ընդգրկում է մանկավարժա-մեթոդական տեսական գիտելիքների և գործնական հմտությունների նվազագույն և անհրաժեշտ այն պաշարը, որին տիրապետելը պարտադիր է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայից որակավորման քննություն հանձնելու համար: Օտար լեզուների դասավանդման ընդհանուր մեթոդիկայի տվյալ որակավորման քննության հաղթահարումը համալսարանի *ասպիրանտների/հայցորդների* մասնագիտական պատրաստման, ինչպես նաև մասնավոր մեթոդիկաների (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլն) բնագավառում նրանց գիտահետազոտական գործունեության բաղկացուցիչ մասն է:

Օտար լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդիկայի գիտական հիմունքներով զինված մասնագետների գնալով մեծացող պահանջը պայմանավորված է 21-րդ դարին բնորոշ՝ բուռն զարգացումներով և մարտահրավերներով: Համաշխարհային մասշտաբով տնտեսական ինտեգրման, ազգերի բազմակողմանի մերձեցման, միջմշակութային կապերի հաստատման և սերտացման, բարձր տեխնոլոգիաներին տիրապետելու անհրաժեշտության պայմաններում առաջատար օտար լեզուների գործնական տիրապետումը ժամանակի հրամայականն է, որն այլընտրանք չունի: Այդ տեսակետից օտար լեզուների զանգվածային ուսուցման մեթոդյա պահանջները բավարարելու համար անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող տեսաբաններ, ուսումնական գործընթացի կազմակերպիչներ, դասախոսներ և ուսուցիչներ, որոնց պատրաստման համար է կոչված օտար լեզուների դասավանդման մեթոդիկան:

Սույն ծրագրով նախատեսված՝ տեսական դրույթների և գործնական հմտությունների ուսուցման ու յուրացման համալիր կազմակերպումը մանկավարժական համալսարանում իրականացվող որակյալ մանկավարժ-մասնագետներ պատրաստելու ռազմավարական ուղղություններից մեկն է: Օտար լեզուների դասավանդման արդի մեթոդիկայի տեսական խորը և ընդգրկուն գիտելիքներին և դրանց գործնական կիրառության տիրապետումը հնարավորություն են ընձեռնում ծավալել գիտամեթոդական բազմակողմանի գործունեություն՝ հողվածներ գրել, ատենախոսություններ պաշտպանել, ղեկավարել դիպլոմային և կուրսային աշխատանքներ, մասնակցել տարբեր մակարդակի գիտաժողովների և

այլն, որոնք օտար լեզուների ուսուցումը գիտական հիմունքներով կազմակերպելու ունակ՝ մանկավարժ-մեթոդիստի կայացման կարևորագույն նախադրյալներն են:

Ծրագրի դրույթները *ասպիրանտների/հայցորդների* ծանոթացնում են որակավորման այդ քննության բովանդակության և ընթացակարգի հետ: Ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել ՀՀ կրթության մասին օրենքի, բուհական և դպրոցական կրթության հայեցակարգերի, կրթության զարգացմանն ուղղված նորմատիվային փաստաթղթերի և բազմալեզվության համաեվրոպական հայեցակարգի կարևորագույն դրույթները:

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ուսուցման նպատակը օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի բազային կարգերից մեկն է և տվյալ պարագայում՝ ուսումնական ծրագրի բովանդակային հենքը: Քանի որ օտար լեզվի ուսուցման նպատակները սերտորեն շախկապված են, ապա դրանց հստակեցումը կարող է հայտնի չափով կանխորոշել որակավորման քննությունից ակնկալվող *ասպիրանտների/հայցորդների* մնացորդային գիտելիքները.

Սույն ծրագրի առանցքային նպատակներն են՝

- որակավորման քննության համար սահմանել օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի հարցաշարի քանակական և որակական բնութագրերը,
- բացահայտել *ասպիրանտի/հայցորդի* մեթոդաբանական տեսական պատրաստվածության մակարդակը՝ ինչպես օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի, այնպես էլ առնչակից գիտությունների՝ մանկավարժության, լեզվադիդակտիկայի, լեզվաբանության, լեզվահոգեբանության, խոսքի հոգեբանության, տարիքային հոգեբանության և ֆիզիոլոգիայի վերաբերյալ,
- ի հայտ բերել նրանց տեսական և գործնական գիտելիքները դպրոցական, բուհական մասնագիտական և մասնագիտական կողմնորոշման դասընթացների բովանդակության և կառուցվածքի, դրանց գործնական, կրթադաստիարակչական և մշակութային նպատակների փոխկապակցված իրականացման վերաբերյալ,
- ստուգել և գնահատել նրանց տեսական և գործնական գիտելիքները լեզվի բաղկացուցիչների բառապաշարի, հնչյունաբանության և քերականության, ինչպես նաև, խոսքային հաղորդակցման չորս տեսակների՝ օտար լեզվով խոսելու, ունկնդրելու, գրելու և կարդալու ունակությունների ձևավորման ու զարգացման վերաբերյալ:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նշված քննությանը մասնակցող *ասպիրանտը/հայցորդը* պետք է՝
ԳԻՏԵՆԱ

Օտար լեզուների ուսուցման և յուրացման վերաբերյալ մանկավարժամեթոդական, լեզվաբանական, լեզվահոգեբանական և հարակից գիտակարգերի տեսությունների հիմնադրույթները, դրանց մեթոդաբանական հիմքերը, հիմնական հայեցակարգերը, օրինաչափությունները և զարգացման միտումները,

ԿԱՐՈՂԱՆԱ

Ստեղծագործական մոտեցում ցուցաբերել՝ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ծառայեցնելով մանկավարժամեթոդական կոնկրետ խնդիրների իրականացմանը:

ՏԻՐԱՊԵՏԻ

Գիտամեթոդական հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան մեթոդներին և սկզբունքներին:

ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ I

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՆ ՈՐՊԵՍ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեղը և դերը մանկավարժական գիտությունների համակարգում: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի՝ որպես գիտության և տեսության ընդհանրությունը և տարբերությունը: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրության հիմնական բաժինները, օբյեկտը և առարկաները: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի առնչակից գիտությունները: Օտար լեզուների ուսուցումը գիտական հիմունքներով կազմակերպելու բաղադրիչները: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման հեռանկարները:

2.ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈՂԻԿԱՅԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Օտար լեզուների ուսուցման ավանդական և ժամանակակից մոտեցումները: Օտար լեզուների ուսուցման բովանդակությունը: Օտար լեզուների ուսուցման նպատակները միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Օտար լեզուների ուսուցման գործնական, կրթադաստիարակչական և մշակութային նպատակների փոխկապակցված իրականացումը: Օտար լեզուների ուսուցման

սկզբունքները և դրանց դասակարգումը: Օտար լեզուների ուսուցման դասական և ժամանակակից մեթոդները: Օտար լեզուների ուսուցման ավանդական (ոչ տեխնիկական) և ոչ ավանդական (տեխնիկական) միջոցները: Օտար լեզուների ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները:

3. ԼԵԶՎԱԴԻԴԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լեզու և խոսք: Ներքին և արտաքին խոսք: Լեզվի բաղադրամասերը և դրանց փոխկապակցված ուսուցման կազմակերպումը: Լեզվական գիտելիք, ունակություն, կարողություն և դրանց փոխադարձ կապը: Խոսքային գործունեության ուսուցման առանձնահատկությունները: Լեզվի հաղորդակցական ուսուցման տեսությունները: Լեզվական գիտելիքները (Linguistic Competence) լեզվահաղորդակցական ունակությունների (Linguistic Performance) փոխակերպվելու հիմքերը: Լեզուների տիրապետման մակարդակները: Թարգմանության գործառույթները օտար լեզուների ուսուցման գործընթացում:

4. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲԱԶՄԱԼԵԶՎՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Երկլեզվության և բազմալեզվության զարգացման դրդապատճառները և այդ գործընթացի կառավարելիությունը: Բազմալեզվության զարգացման օրինաչափությունները: Համադաս և ստորադաս երկլեզվություն ու բազմալեզվություն: Լեզուների փոխներթափանցման դրական (transfer) և բացասական (interference) ազդեցությունները: Ակտիվ և պասիվ բազմալեզվության դրսևորումները: Բուհում բազմալեզվության ուսուցման մոտեցումները և սկզբունքները: Բազմալեզվության ուսուցման բովանդակությունը:

5. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻԶԸ

Օտար լեզուն որպես տվյալ մշակույթի բաղկացուցիչ մաս: Լեզվի և մշակույթի փոխկապակցված ուսուցումը: Օտար լեզվի միջմշակութային ուսուցման տեսական հիմունքները: Միջմշակութային հաղորդակցության դրսևորումները: Օտար լեզուների ուսուցման բովանդակությունը միջմշակութային համատեքստում:

ՄԱՍ II

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԲԱՌԱՆՅՈՒԹԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օտարալեզու բառապաշարի ուսուցման և յուրացման բովանդակությունը: Օտարալեզու բառապաշարի ուսուցման նպատակներն ու խնդիրները: Օտարալեզու

բառապաշարի ընտրության սկզբունքները: Բառիմաստի բացահայտման եղանակները: Յուրացվող բառանյութի ամրապնդումը: Բառապաշարի թեմատիկ և իրադրային ուսուցման առանձնահատկությունները: Օտարալեզու բառապաշարի ուսուցման և յուրացման վարժությունների համակարգը: Յուրացվող բառապաշարի վերահսկումը: Յուրացված բառանյութի գնահատումը:

2. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օտարալեզու քերականության ուսուցման և յուրացման բովանդակությունը: Օտարալեզու քերականության ուսուցման նպատակներն ու խնդիրները: Օտարալեզու քերականության ուսուցման մեթոդներն ու եղանակները: Օտարալեզու քերականական նյութի ընտրության մոտեցումներն ու սկզբունքները: Քերականության ուսուցման ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները: Ուսուցանվող քերականական նյութի ամրապնդման համալիր վարժությունները: Քերականության ուսուցման և յուրացման վարժությունների համակարգը: Յուրացվող քերականության վերահսկումը: Յուրացված քերականության գնահատումը:

3. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օտարալեզու հնչյունաբանության ուսուցման և յուրացման բովանդակությունը: Օտարալեզու հնչյունաբանության ուսուցման նպատակներն ու խնդիրները: Հնչյունաբանական նյութի մատուցման եղանակները: Օտարալեզու հնչյունական համակարգի յուրացման վարժությունների համակարգը: Տեխնիկական միջոցների կիրառումը հնչյունաբանության ուսուցման գործընթացում:

ՄԱՍ III

ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Ունկնդրություն՝ որպես ընկալողական խոսքի բնութագրումը: Օտարալեզու ունկնդրության ունակությունների ձևավորման և զարգացման հիմնադրույթները: Ունկնդրության տեսակները և դրանց ներկայացվող պահանջները: Նախա-ունկնդրական, բուն ունկնդրական և ետունկնդրական մեթոդական համալիր գործունեությունները: Օտարալեզու բանավոր խոսքը ունկնդրելու և այն հասկանալու ունակությունների զարգացման վարժությունների համակարգը:

Ունկնդրության ուսուցման տեխնիկական միջոցները: Օտար լեզվի ունկնդրության ունակությունների զարգացման գործընթացի վերահսկման եղանակները: Օտար լեզվի ունկնդրության ունակությունների զարգացման աստիճանը բացահայտելու եղանակները:

2. ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԽՈՍԵԼՈՒ ՌԻԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՁԵՎՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Խոսողության` որպես (վեր)արտադրողական խոսքի բնութագրումը: Օտար լեզվով խոսելու ունակությունների ձևավորման և զարգացման հիմնադրույթները: Պատրաստի և համպատրաստի խոսք: Խոսքի տիրապետման ասույթի և խոսույթի մակարդակները: Մենախոսության և երկխոսության տարբերակված ուսուցման կազմակերպումը: Խոսքի զարգացման դրդապատճառի (motivation) գործոնը: Բանավոր հաղորդակցական գործունեությանը նպաստող միջոցները և միջոցառումները: Օտար լեզվով խոսելու ունակությունների ձևավորման ու զարգացման վարժությունների համակարգը: Օտար լեզվով խոսելու կարողությունների զարգացման գործընթացի վերահսկումը: Օտարալեզու խոսքին տիրապետելու մակարդակը բացահայտելու եղանակները:

3. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՌԻԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՁԵՎՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընթերցանության` որպես ընկալողական խոսքի բնութագրումը: Օտարալեզու ընթերցանության և ընթերցածը հասկանալու ունակությունների համաժամանակյա ձևավորման ու զարգացման հիմնադրույթները: Լուռ և բարձրաձայն ընթերցանության նպատակները և առանձնահատկությունները: Ընթերցանության տեսակները և դրանց տարբերակված ուսուցման բովանդակությունը: Օտարալեզու ընթերցանությանը ներկայացվող պահանջներն ըստ տարբեր մեթոդների: Նախաընթերցական, բուն ընթերցական և ետընթերցական մեթոդական համալիր գործունեությունները: Օտարալեզու ընթերցանության ունակությունների զարգացման վարժությունների համակարգը: Օտարալեզու ընթերցանության ունակությունների զարգացման գործընթացի վերահսկումը: Օտարալեզու ընթերցանության և թարգմանության ունակությունների զարգացման աստիճանը բացահայտելու եղանակները:

4. ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԳՐՈՒԹՅԱՆ ՌԻԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՁԵՎՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գրության` որպես (վեր)արտադրողական խոսքի բնութագրումը: Օտարալեզու գրության ունակությունների ձևավորման և զարգացման հիմնադրույթները: Օտարալեզու գրության ուսուցման բովանդակությունը: Օտարալեզու գրությանը ներկայացվող պահանջներն ըստ տարբեր մեթոդների: Օտարալեզու գրության

ունակությունների զարգացման վարժությունների համակարգը: Օտարալեզու գրության ուսուցման գործընթացը վերահսկելու եղանակները:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի որակավորման քննությունը նախատեսված է ասպիրանտուրա ընդունվողների և ատենախոսական թեզ պաշտպանող հայցորդների համար: Քննության հարցաշարը բաղկացած է հարյուր հարցից, միևնույն ժամանակ հայցորդներին լրացուցիչ հանձնարարվում է ևս քսան հարց՝ իրենց թեզերի վերաբերյալ: Հարցաշարը արտացոլում է ծրագրի բովանդակության բոլոր դրույթները, որոնց մի մասը, ըստ կարևորության, հարցատոմսերում հանդես են գալիս ավելի մանրամասն և ընդգրկուն:

Հարցաշարի հիման վրա կազմված է երեսուներեք հարցատոմս, յուրաքանչյուրը ներառում է երեք հարց: Առաջին հարցը բովանդակում է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսության որևէ դրույթ, երկրորդ հարցը վերաբերում է օտար լեզուների գործնական ուսուցման և յուրացման կազմակերպմանը, երրորդ հարցն ամփոփում է խոսքային գործունեության տեսակների՝ խոսելու, ունկնդրելու, կարդալու և գրելու ունակությունների զարգացման որևէ դրույթ:

Քննությանը մասնակից ատենախոսական թեզ պաշտպանող հայցորդին, բացի քննատոմսի երեք հարցերից, տրվում են լրացուցիչ հարցեր՝ իր թեզի վերաբերյալ:

Նշված հարցաշարը ներկայացված է ծրագրին կից:

ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ/ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ԳԻՏԱԴՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- գիտական հոդվածների հրապարակում
- մասնակցություն գիտական սեմինարներին, կոնֆերանսներին և այլ միջոցառումներին
- մասնակցություն գիտաժողովներին զեկուցումներով
- գիտափորձերի կազմակերպում գիտական ղեկավարի վերահսկողությամբ
- կատարված գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ պարբերական հաշվետվության ներկայացում՝ ղեկավարին և կցված ամբիոնի նիստերում
- ատենախոսական թեզից պաշտպանություն

Կազմեց

մանկ.գիտ.թեկ., պրոֆեսոր

Հայրյան Կ.Ա.

«Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա» առարկայի

ՀԱՐՑԱՇԱՐ

Ասպիրանտների և հայցորդների որակավորման քննության

1. Օտար լեզուների ուսուցման նպատակները միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում
2. Օտար լեզվի ունկնդրության ունակությունների ձևավորման և զարգացման հիմնադրույթները
3. Օտար լեզուների ուսուցման բովանդակությունը միջնշակութային համատեքստում
4. Օտարալեզու հնչյունաբանության ուսուցման նպատակներն ու խնդիրները
5. Օտար լեզուների ուսուցման ավանդական և ժամանակակից մոտեցումները
6. Օտարալեզու գրության ունակությունների զարգացման վարժությունների համակարգը
7. Օտար լեզուների ուսուցումը գիտական հիմունքներով կազմակերպելու բաղադրիչները
8. Տեսական և գործնական քերականության հարաբերակցման խնդիրը օտար լեզվի ուսուցման գործընթացում
9. Օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի՝ որպես գիտության և տեսության ընդհանրությունը և տարբերությունը
10. Օտարալեզու գրության ունակությունների ձևավորման և զարգացման հիմնադրույթները
11. Օտարալեզու քերականության ուսուցման և յուրացման վարժությունների համակարգը
12. Օտարալեզու ակտիվ, պասիվ և ներգոր բառապաշարի բնութագրումը
13. Օտար լեզվի դասի պլանավորումը և կազմակերպումը
14. Լեզվակրթության համաեվրոպական պահանջները և չափանիշները
15. Լեզվի հաղորդակցական ուսուցման տեսությունները
16. Օտար լեզվով խոսողության ունակությունների ձևավորման և զարգացման հիմնադրույթները
17. Տեխնիկական միջոցների կիրառումը հնչյունաբանության և ունկնդրության ուսուցման գործընթացում
18. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ճյուղերը
19. Օտար լեզվի հնչյունական համակարգի յուրացման վարժությունների համակարգը
20. Օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդները

21. Բազմալեզվության զարգացման օրինաչափությունները՝ համադաս և ստորադաս բազմալեզվություն
22. Օտարալեզու բառապաշարի թեմատիկ և իրադրային ուսուցման առանձնահատկությունները
23. Օտարալեզու բառապաշարի ընտրության սկզբունքները՝ ըստ գործնական նպատակների
24. Լեզվի և մշակույթի փոխկապակցված ուսուցումը
25. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկան որպես գիտություն և տեսություն
26. Օտար լեզուների ուսուցման լսա-լեզվական մեթոդի (The Audio-Lingual Method) հիմունքները
27. Թարգմանության գործառույթները օտար լեզուների ուսուցման գործընթացում
28. Օտարալեզու բանավոր խոսքը ունկնդրելու և հասկանալու ունակությունների զարգացման վարժություններ
29. Օտար լեզուների մասնագիտական կողմնորոշման ուսուցման առանձնահատկությունները
30. Լեզվաբանական և հաղորդակցական իրազեկությունների հարաբերակցությունը
31. Օտարալեզու քերականության ուսուցման կազմակերպում ըստ գործնական նպատակի
32. Օտար լեզուների ուսուցման միջմշակութային բաղադրիչը
33. Ուսուցանվող քերականական նյութի ամրապնդման համալիր վարժությունները
34. Օտար լեզուների միջմշակութային ուսուցման տեսական հիմունքները
35. Օտար լեզուների ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները
36. Խոսքային գործունեության ուսուցման առանձնահատկությունները պասիվ հաղորդակցական միջավայրում
37. Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները ըստ տարիքային տարբեր խմբերի
38. Օտար լեզուների ուսուցման սկզբունքների մեթոդաբանական հիմքերը
39. Լեզուների փոխներթափանցման դրական (transfer) և բացասական (interference) ազդեցությունները
40. Բազմալեզվության ուսուցման առանձնահատկությունները ՀՀ-ում
41. Օտարալեզու քերականության ուսուցման և յուրացման բովանդակությունը
42. Օտարալեզու բառիմաստի բացահայտման մեթոդական եղանակները
43. Օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները բազմալեզվության պայմաններում

44. Օտարալեզու խոսքի զարգացման ինտերակտիվ մեթոդները
45. Օտար լեզուների մասնագիտական ուսուցման առանձնահատկությունները
46. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկային առնչակից գիտությունները
47. Թարգմանության գործոնը օտարալեզու ընթերցանության ուսուցման գործընթացում
48. Յուրացվող լեզվական նյութի ամրապնդման եղանակները
49. Սովորողի մայրենի լեզվի դերը օտար լեզվի ուսուցման տարբեր մեթոդների տեսանկյունից
50. Բուհում բազմալեզվության ուսուցման մոտեցումները և սկզբունքները
51. Օտար լեզվի բաղկացուցիչների ուսուցման վերահսկումը և արդյունքների գնահատումը
52. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի գիտահետազոտական մեթոդները
53. Օտարալեզու հնչյունաբանական նյութի մատուցման եղանակները
54. Օտարալեզու խոսքում դրսևորվող սխալները կանխելու և ուղղելու մեթոդական մոտեցումները
55. Օտարալեզու քերականության ուսուցման նպատակներն ու խնդիրները
56. Լեզվի բաղկացուցիչների փոխկապակցված ուսուցման կազմակերպումը
57. Օտար լեզուների ուսուցման սկզբունքները և դրանց դասակարգումը
58. Մոտավորեցման սկզբունքի (approximation) կիրառությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում
59. Համակարգչի և համացանցի կիրառությունը օտար լեզուների ժամանակակից ուսուցման գործընթացում
60. Լեզու և խոսք: Ներքին և արտաքին խոսք:
61. Օտարալեզու ընկալողական և (վեր)արտադրողական վարժությունների կիրառման ոլորտները
62. Յուրացվող բառապաշարի վերահսկման և յուրացված բառանյութի գնահատման եղանակները
63. Ցուցադրությունը՝ որպես օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդ
64. Օտար լեզուների ուսուցման բովանդակության բաղադրիչները
65. Օտար լեզուների ուսուցման գործնական, կրթադաստիարակչական և մշակութային նպատակների փոխկապակցված իրականացումը
66. Օտար լեզուների ուսուցման քերականական-թարգմանական մեթոդի (The Grammar-Translation Method) հիմունքները
67. Օտարալեզու բառապաշարի ուսուցման նպատակներն ու խնդիրները

68. Բազմալեզվության զարգացման դրդապատճառները և այդ գործընթացի կառավարելիությունը
69. Օտարալեզու ընթերցանության ունակությունների զարգացման վարժությունների համակարգը
70. Օտարալեզու բառապաշարի ուսուցման և յուրացման բովանդակությունը
71. Ուսումնական նպատակներին հարմարեցված և բնագրային տեքստերի գործածության դերն ու նշանակությունը
72. Օտար լեզուների ուսուցման լեզվաբանական հիմնական տեսությունները
73. Լեզվական գիտելիքները (Linguistic Competence) լեզվահաղորդակցական ունակությունների (Linguistic Performance) փոխակերպվելու հիմքերը
74. Խոսքի զարգացման դրդապատճառի (motivation) գործոնը
75. Ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումների բնութագրերը
76. Լեզվի բաղկացուցիչների ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու ուղիները
77. Բարձր տեխնոլոգիաների կիրառությունը օտար լեզուների ուսուցման գործընթացում
78. Օտարալեզու ընթերցանությանը ներկայացվող պահանջներն՝ ըստ տարբեր մեթոդների
79. Օտար լեզուների ուսուցման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցում
80. Ակտիվ և պասիվ բազմալեզվության դրսևորումները
81. Վարժությունների գերակա դերի սկզբունքը օտար լեզուների ուսումնասիրության գործընթացում
82. Նվազաչափության սկզբունքի (minimization) կիրառությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում
83. Օտար լեզուների ուսուցման ուղիղ մեթոդի (The Direkt Method) հիմունքները
84. Խոսքային գործունեության տեսակները և դրանց մեթոդական դասակարգումը
85. Օտար լեզվի ուսուցման բովանդակությունը ուսանողակենտրոն մոտեցման շրջանակներում
86. Օտար լեզուների դպրոցական ուսուցման կրթադաստիարակչական նպատակները
87. Լեզվական գիտելիք, ունակություն, կարողություն և դրանց փոխադարձ կապը
88. Օտարալեզու խոսողության ուսուցման և յուրացման բովանդակությունը
89. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի զարգացման հեռանկարները
90. Օտարալեզու բառապաշարի ընտրության սկզբունքները

91. Օտար լեզուների տիրապետման մակարդակների բացահայտման եղանակները
92. Օտարալեզու բառապաշարի հարստացման մեթոդական եղանակները
93. Տարիքային հոգեբանության և խոսքի հոգեբանության դրույթների կարևորությունը
94. Օտար լեզուների ուսուցման կազմակերպումը հաղորդակցական մոտեցման համատեքստում
95. Օտար լեզվով խոսողության ունակությունների զարգացման վարժությունների համակարգը
96. Քերականության ուսուցման ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները
97. Օտարալեզու բանավոր խոսքի ակտիվացման արտալսարանային աշխատանքի կազմակերպումը
98. Ընթերցանության տեսակները և դրանց տարբերակված ուսուցման բովանդակությունը
99. Օտար լեզուների ուսուցման ավանդական միջոցները
100. Դիդակտիկական սկզբունքների կիրառումը օտար լեզվի դպրոցական դասընթացում

Կազմեց

մանկ.գիտ.թեկ., պրոֆեսոր՝

Հայրյան Կ.Ա.